410. **Մ. Ա. Գաբրիէլեան** . — Նիւ-Եորքի մէջ ժողովրդական անուն շահած և ազգային գործիչի համբաւ թողած կարող բժիշկներէն կան Այվազեան, Գաբրիէլեան, Արշակունի և նորեր : Գաբրիէլեան իր ընդգրկած ասպարէզին հետ ջերմ փարած է նաեւ հայ գրականութեան և երկասիրած հետեւեալները, բոլորն ալ իր սեպհ. տառերով դրոշմուած : 1891, Արուեստ ատենախօսութեան : 1892, Խրիմեան Հայրիկ : 1893, Ատենախօսութիւնք : Ազգ. քաղաքականութիւն Հայոց : 1894, Հայկական հոգեբանութիւն : 1897, Քրիստոնեայ Հայաստան և քրիստոնեայ տէրութիւնք (անգլ. և հայ.), 1911 : Հայ ցեղը : — 1891 Յնվր. 1 էն սկսեալ փարած է նաեւ խմբագրութիւնը **Հայքի**, դադրած 1 Ապր. 1898 ին :

411. **Եղիսա Բաղատ. եւ. Ընկ.** տպած են Պիտանի գիտելիքներ (1897), Ինքնաուսուցիչ անգլ. լեզուի (նաեւ նոյնին անգլ.ը), Մեր վարդագոյն տետրակը (1898), բոլորն ալ գործերը ՊԵՏՐՈՍ Ռ. ԹՈՐՈՍԵԱՆի որ այս տարի հրատարակեց **Ո՞վ է Մերսիչ Փորթուգալեան** : 1899, Առձեռն Ամերիկեան բառարան անգլիերէնէ հայերէն :

412. **Տպ. "Կոչնակ,,ի** . — † Հ. Մ. Ալէն 15 Դեկտ. 1900 ին սկսած է հրատարակել այս թերթը : Պոլսոյ «Աւետաբեր» շաբաթաթերթի խմբագրապետութեան երբ կոչուեցաւ, բողոքական Հայեր շարունակեցին լոյս ընծայել **Կոչնակը** որ այս տարի գրաշար-մեքենայով (լինօթիփի) կը տպագրուի, — առաջին նորոյթը հայ տպարանական աշխարհին մէջ :

413. **Տպ. "Երիտասարդ. Հայաստան,,ի** . — Այս թերթը 1903 թուականին սկսած է հրատարակուիլ Սապահ-Գիւլեանի կողմէ, իբր օռ.կան Ս. Դ. Հնչ. կուսակցութեան : Նոյն տպարանէն լոյս ընծայուած են Գործաւոր դասակարգը (1905), **Հաւաէ** (1907), Կարմիր օրեր (1909), Սահմ. հայ. յառաջ. ընկ. : Տպարանն այժմ փոխադրուած է ՓՐՕՎ.ԻՏԷՆՍ :

414-416. **Արաքս** թերթի (խմբ. Յ. Յակոբեան, 28 Հոկտ. 1905 - 1907 Մարտ) տպարանէն 1909 ին լոյս ընծայուած է Ատրպատ Մարասպանտայ Անդարձ : ** ԱՐԾԻՒ թերթը 1905 Յուլիսին հրատարակած է Արշակ Տէր Մաթոսեան որ միայն 1906 ի դադարով շարունակած է զայն մինչեւ 1908 : Երիտասարդ խմբագիրն իր անձնական միջոցներով քանի մը տարիէ ի վեր Նիւ-Եորքի մէջ կը հրատարակէ ընտիր տպագրութեամբ պատկ. Armenia անգլ. ամսաթերթը որ նախապէս (1904) օռ.կանն էր Ամերիկայի Հնչակեան նահանգային վարչութեան, և որուն մէջ յայտնի հայ գրագէտներու գրուածներէ թարգմանութիւններ կը գտնուին միշտ : ** ԱՐԱԳԱԾ պատկ. շաբաթաթերթը 1911 ին շքեղ տպագրութեամբ և ճոխ պարունակութեամբ լոյս ընծայեցին Վ.եր. Հնչակեանք՝ հազիւ սակայն 20 թիւ, երբ տպարաննին հրոյ ճարակ եղաւ :

**ԲՕՍԹԸՆ** քաղաքին մէջ կը հիմնուի Հ. Յ. Դաշնակցութեան օռ.կան՝

417. "**Հայրենիք**,,ի տպարանը : Այս թերթն ի Նիւ-Եորք 1 Մայիս 1899 ին հրատարակած է Պ. Զարշաֆճեան որ յետոյ յանձնած է Հնչակեաններու, հուսկ ուրեմն Դաշնակցութեան : «Հայրենիք»ի տպարանէն լոյս ընծայուած են . — Անդրանիկէ, Արշալոյս, Մօսունի և Ջօռ.ի արշաւանքները, Յեղ. վիպակներ, Սահմ. կառավարութիւններ, Երգարան, Ռուս. Ս. Յեղ. ծրագիրը, Միութեան խնդիրը, Սօցիալիզմ, Իմ եղբայր գիւղացիին, Երկրագործութիւնը որպէս ուղիղ ճանապարհ (Բ. տիպ), Քա.ի սօցիալական ուսմունքը, Կրէնգրպիլ, Զայրոյթի օրը, Իզմիրլեան աքսորավայրին մէջ, Երազս, Դէպ ի երկիր (Է. Ակնունի), Այդպէս էր, Կանօնագրութիւն Վ.անի ուսումնասիրաց ընկ.եան, Շանթեր, Օրէնքի և ընկերութեան գոհերէն, են. :

418-424. **Ձայն Հայրենեաց** զոր Չիթճեան 20 թիւ հրատարակած էր ի ՆԻՒ-ԵՕՐՔ, կը փոխադրուի ՈՒՍՏԸՐ հոնկէ ալ ՊՕՍԹԸՆ : Այս թերթը օռ.կանն էր Հնչակեան նահանգային վարչութեան, շարունակուած մինչեւ 1906 : Օսմ. Սահմ. հռչակումէն վերջ Լ. Լարենց 2 տարիի չափ Կ. ՊՈԼԻՍ հրատարակած է զայն : Նոյն տպարանէն լոյս ընծայուած են Ջնտանները (1904), Գործնական կեանքը (1905), Լուծին տակ (1906) : ** ԱԶԴ 1907 էն շարունակութիւնն է «Ձ. Հայրենեաց»ի : Խմբագիր եղած է Ս. Պարթեւեան : Վ.եր. Հնչակեանց պառակտումէն վերջ, «Ազգ» օռ.կանը դարձած է Սահմ. Ռամկավար նոր կուսակցութեան : «Ազգ»ի տպարանէն լոյս ընծայուած են **Փեուրեան Օճախը** (1908), Հայդուկին աղօթքը,